

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԶ ՀԴՂԺՈՂԿՈՄԱՏ
ՄԵՂՎԱԲՈՒԾԱԿԱՆ ԳԻՏԱՆԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԶՈՆԱԼ ՆԱԾԱ

ՄԵՂՎԱԲՈՒԾԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

638
Մ-58

ԳՅՈՒՂՀՐԱՅ

1937

ՅԵՐԵՎԱՆ


ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ
ՄԵՂՎԱԲՈՒԾԱԿԱՆ ԳԻՏԱԶԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԶՈՆԱԼ ԿԱՅԱՆ

638
558

ՄԵՂՎԱԲՈՒԾԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

28.06.2013

22.972



642
37

Пчеловодные правила

Сельхозгиз Армении, Ереван, 1937 г.

24 SEP 2010

Քյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցումը՝ գյուղ-կուլտուրաների ու խոտաբույսերի ցանքերի ավելացման և գյուղատնտեսութեան մեքենայացման կապակցութեամբ՝ խոշոր պայմաններ և ստեղծում մեղվաբուծութեան զարգացման համար:

Կուլտնտեսութեաններն ու կուլտնտեսականները պետք և ոգտագործեն կուլտնտեսութեան շրջապատի բուսականութեան մեջ թափնված այն հարստութեանները, վորոնք առանց մեղուների կորչում են անոգում:

Կուլտնտեսային մեղվանոցը պետք և կազմակերպել այնպես, վոր նրանից ստացվի առավելագույն յեկամում: Մեղվանոցի կազմակերպչական և արտադրական պլանները կազմելիս նախ և առաջ անհրաժեշտ և հաշվի առնել տեղի նեկտարատու բուսականութեանը:

Կուլտնտեսային մեղվանոցի կազմակերպման և նրա հետագա զարգացման գործում խոշոր նշանակութիւն ունի լավագույն տեխնիկական սարքավորում ոգտագործելու հնարավորութեանները, տգրո-գոտտեխնիկական ձեռնարկումների

լիակատար կիրառումը, հիվանդությունների դեմ
ժամանակին պայքար կազմակերպելը, կադրերի
փորակավորումը և հոգատար վերաբերմունքը գե-
պի կոլտնտեսության գույքը:

Ամեն մի կոլտնտեսական, համաձայն սոա-
լիստյան կոլտնտեսային կանոնադրության, նպա-
տակ պետք է դնի իր դռան առաջ ունենալ մեղ-
վի 20 ընտանիք:

Համապատասխան քանակի մեղվի ընտանիք-
ներ կարելի չե ձեռք բերել Հայաստանի մի
շարք շրջանների կոլտնտեսություններին, և
մեղվաբուծական խորհրտնտեսություններին:

Մեղուներ ձեռք բերելու դործում կոլաբն-
տեսություններին և կոլտնտեսականներին պետք է
ոժանդակեն շրջանի հողբաժինը, մեղվաբուծու-
թյան հրահանգիչը և անասնաբուժը:

Ձեռք բերված մեղվի ընտանիքները պետք
է լինեն ազրոգողականներին համապատասխան:

Կոլտնտեսության մեղվանոցը կազմակեր-
պելու հետ միաժամանակ անպայման պետք է
կազմակերպել մեղունների ձմեռոցի խնդիրը:
Ձմեռոցի ծավալը—չափը փորոշվում է մեղվա-
նոցի մեծությամբ: Ձմեռոց կազմակերպելու
նպատակն է խնայել մեղունների ուժն ու կեն-
սունակությունը և անտեսել նրանց կերակրաշարը:

Բացի ձմեռոցից, պետք է ունենալ առան-
ձին սննյակ, փորտեղ կարելի լինի կատարել
զանազան աշխատանքներ, այսինքն՝ նորոգել և
ախտահանել մեղվաբուծական խնայնատարը,
մետաղալարել շրջանակները և այլն: Մեղվանո-
ցում պետք է լինի նաև առանձին պահեստ՝ փե-
թակները և նրանց պահեստի մասերը և այլ
պարագաներ պահելու համար:

Մեղվանոցները պետք է դասավորել այն-
պես, փոր յուրաքանչյուր կետում լինի այնքան
մեղվի ընտանիք, փորքան հարկավոր է տվյալ
շրջապատի մեղրատու բազան լրիվ ոգտագոր-
ծելու համար:

Կոլտնտեսային մեղվաբուծության հիմքում
պետք է լինի յերկու մոմենտ՝ անխնա պայքար
բնական ձագատվության դեմ, և մեղ-
վանոցն աճեցնել արհեստական ձագեր վերցնելու
միջոցով:

Կոլտնտեսության մեղվանոցի բերքատվու-
թյունն էլ ավելի բարձրացնելու և մեղունների
փորակական-տնտեսական հատկանիշներն ոգտա-
դործելու համար անպայման պետք է զբաղվել ար-
հեստական մայրաբուծությամբ՝ կիրառելով մայ-
րաբուծության հրահանգում նշած բոլոր կետերը:
Բացի աչքի ընկնող ոեկորդիստ մայրերից, մնա-
ցած մայրերը յերկու տարուց ավելի չպետք է
պահել:

Կոլտնտեսային մեղվանոցներում կորսւա-
ների դեմ պայքարելու ամենակարելիոր մոմենտ-
ներից մեկը հանդիսանում է հիվանդություննե-
րի խալառ վերացումը, մեղվանոցում լիակա-
տար պրոֆիլակտիկա կիրառելը և գործածության
մեջ յեղած ինվինտարի ու գործիքների ախտահա-
նումը՝ կիրառելով մեղվաբուժության գոռվետ
կանոնները:

Մեղվանոցն ուժեղ ընտանիքներով բերքին
դիմավորելու ամենաանհրաժեշտ պայմաններից
մեկը հանդիսանում է մեղուների գարնան խնամքը՝
զրա համար ել պետք է անշեղորեն կիրառել այն
բոլոր կանոնները, վորոնք մշակված են ագրոգո-
կանոններում և գոռվետ միւնիստումում:

Ընդհանրապես բարձր բերք ստանալու
ամենահիմնական պայմանը հանդիսանում է՝ վոր-
քան կարելի յե ուժեղ ընտանիքներով մեղրա-
բերքին դիմավորելը, իսկ ուժեղ ընտանիքներ
ունենալու համար անհրաժեշտ է ձմեռոց դնել ու-
ժեղ, թարմ, յերիտասարդ մեղվային զանգված ու-
նեցող մեղվի ընտանիքներ՝ առատ կերապաշարով:

Գարնանից մինչև գլխավոր մեղրաբերքն
ագրո-գոմիջոցառումներն անշեղորեն կիրառե-
լու միջոցով պետք է ուժեղ կերպով զարգացնել
մեղվի ընտանիքները, այնպես վոր, մինչև մեղ-

րաբերքի սկիզբը նրանք հասնեն իրենց ուժի
առավելագույնին:

Մեղրաբերքի ընթացքում մեղրաքամը պետք
է կազմակերպել մի քանի անգամ: Մեղր կարելի
յե քամել այն ժամանակ, յերբ մեղուներն սկը-
սում են կնքել: Մինչ այդ քամելու դեպքում
մեղրի վորակը կարող է ցածր լինել:

Մեղրաքամը պետք է կազմակերպել փակ
ծածկի տակ և, յեթե հնարավոր է, մեղվա-
նոցից միքիչ հեռու: Քամած մեղրը պետք է
լցնել համապատասխան ամանների մեջ և բերան-
ներն ամուր փակել:

Կոլտնտեսային մեղվանոցի մեղվապահը պար-
տավոր է ոժանդակել կոլտնտեսականներին՝ մեղ-
վաբուժության տեխնիկան նրանց մեջ տարա-
ծելու համար: Բացի անհատական ցուցումներից
ու կոլտնտեսականների մեղվանոցները հաճախե-
լուց, կոլտնտեսության մեղվապահի անմիջական
դեկավարությամբ և շրջանի մեղվաբուժ հրահանգ-
չի ոժանդակությամբ կոլտնտեսության կից
պետք է կազմակերպել մեղուվաբուժության
տեխնիկայի տիրապետման խմբակ:

Կոլտնտեսության մեղվանոցում պետք է
կազմակերպել արհեստական մայրաբուժություն,
և, հնարավորության սահմաններում, բեղմնավոր-
ված մայրերով ոժանդակել հարեվան կոլտնտե-

դուլթյուններին, կոլտնտեսական և անհատ մեղավա-
պաններին:

Միաժամանակ կոլտնտավարչությունները
պետք է ուժանդակեն կոլտնտեսականներին՝ նրանց
մեղվանոցների համար պահանջվող սարքավո-
րումը (փեթակներ, մոմաթերթ, շաքարավազ,
գործիքներ) ձեռք բերելու համար:

Աշխատանքի ճիշտ դասավորման, հոգատար
վերաբերմունքի առկայութեան գիտութեան նվա-
ճումները մասնաշաղկապանացնելու և մեղվաբուծու-
թյան ազրո-զոո-վետ-կանոնները ճշտիվ կիրառե-
լու հիման վրա՝ մեղվաբուծությունն անշեղորհն
զարգանում է կոլտնտեսություններում, բարձրաց-
նում է կոլտնտեսութեան ընդհանուր յեկամուտը
և խթան հանդիսանում կոլտնտեսականի համար
կոլտուրական-ունևոր կյանք ստեղծելուն:

ՄԵՂՎԱԲՈՒԾԱԿԱՆ ԱԳՐՈՋՈՂ ԿԱՆՈՆՆԵՐ

Յուրաքանչյուր մեղվաբուծական տնտեսու-
թյուն պետք է իր մեղվանոցներում կիրառի
հերթհիշյալ ազրո-զոո կանոնները:

1. Ձմռան վերջին և գարնան սկզբներին,
լերք մեղուները դեռ ձմեռոցում են, պետք
է ուժեղ հսկողութեան սահմանել և ոգտազործել
ձմեռոցի համար դեռ աշնանից սարքավորված
ողափոխութեան բոլոր հնարավորությունները:

2. Նախքան մեղուները ձմեռոցից դուրս
դնելը, պետք է ընտրել մեղվանոցի տեղը և մաք-
րել այն: Մեղվանոցի տեղը պետք է լինի չոր,
քամիներից պաշտպանված, աղմուկից, ջրերից,
գետերից, ճանապարհներից, ճահիճներից հեռու և
յերկարատև շոգերից պաշտպանված:

3. Մեղուները ձմեռոցից դուրս պետք է
դնել, յերբ դրսում, այլևս ձյուն չկա և ջեր-
մաստիճանն ստվերում հասնում է 10—13 աստի-
ճանի (ըստ Յելսիուսի). դուրս դնելու աշխա-
տանքը պետք է կատարել լավ յեղանակին:

4. Այս կանոնից բացառութեան կազմել և
մեղուները՝ ձմեռոցից դուրս դնել կարելի յե
միայն այն դեպքում, յերբ ողափոխութեան բոլոր
միջոցները գործադրելուց հետո ձմեռոցում մե-
ղուները դարձյալ անհանգիստ են:

5. Դուրս դնելուց և մաքրման թռիչքից հե-
տո մեղվանոցում պետք է կատարել ընտանիք-
ների արտաքին թուլցիկ ստուգում, պարզել
նրանց վիճակը:

6. Մաքրման թռիչքից 1—2 օր հետո պետք
է մաքրել փեթակների հատակները, հանել ավե-
լորդ շրջանակները, վորոնց վրա մեղու չկա, քե-
րել և հավաքել փեթակում յեղած մոմը, բուռը
սղմել կենտրոնում և յերկու կողմից տալ տաքա-
ցումներ:

7. Զրից հետո մեղվանոցներում պետք է գտնել ջրի ծորակներ:

8. հատակները մաքրելու աշխատանքները վերջացնելուց հետո, որվա տաք յեղանակին, պետք է կատարել ընտանիքների առաջին գլխավոր ստուգումը: Հայտարարված անմայր ընտանիքներին պետք է տալ պահեստի մայրեր, իսկ մայր չլինելու գեպքում միացնել մայր ունեցող ընտանիքներից մեկին հետ: Ընտանիքներին պետք է տալ շրջանակով կնքված մեղր, կամ թանձր շաքարաջուր:

9. Կերպակա ընտանիքների պաշարի լրացումը շաքարով կատարելիս պետք է տալ թանձր շաքարաջուր (յերկու բաժին շաքար, մեկ բաժին ջուր), այն ել մեծ բաժիններով՝ 800—1500 գրամ մեկ անգամից):

10. Ամբողջ սեզոնի ընթացքում պետք է պայքարել մեղուների գողության դեմ:

11. Մեղվանոցում պետք է պարբերաբար հսկողություն ունենալ, կարիքի դեպքում ընտանիքի բունը համապատասխան չափով լայնացնելու՝ լրացուցիչ չեչեր տալու համար:

12. Չեչն անմիջապես բնի կենտրոնում տալ չի թուլատրվում: Լեզվակների գոյությունը մեղվի ընտանիքում անհանդուրժելի յե:

Յերեք տարուց ավելի գործածված (հին, սեված ցած) չեչերը բնում չպետք է գործածել:

13. Անկանոն և բուռն չեչերից խուսափելու նպատակով մոմաթերթերը փակցնել անպայման մետաղալարված շրջանակների վրա:

14. Մեղվանոցում չպահել յերկու տարեկանից բարձր հասակ ունեցող մայրեր, բացի ռեկորդիստ մայրերից:

15. Պայքարել ձագատենդի և բնական ձագատվության դեմ:

16. Մեղվի ընտանիքների բազմացումը կատարել արհեստական ձագ վերցնելու միջոցով: Ձագ վերցնել մեղրաբերքից 30—50 որ առաջ:

17. Արհեստական մայրաբուծության աշխատանքները ձեռնարկել այն հաշվով, վոր մեղրաբերքից 30—50 ցր առաջ հնարավոր լինի ունենալ բեղմնավորված մայրեր:

18. Մեղվանոցային գույքը պետք է կանոնավոր դասավորել մեղվանոցին կից հատուկ շենքերում, վորտեղ մեղուները չեն կարող մուտք գործել:

19. Անպայման մեղրը քամել մեղուներին անմատչելի հատուկ կամ հարմարեցված շենքերում:

20. Մեղվանոցում պետք է ունենալ. 1) մեղվանոցային տետր և նրանում գրանցել յուրա-

քանչյուր ընտանիքին վերաբերող գիտողությունները. 2) տասնորդական կշեռք և նրա վրա դնել մեղվանոցի սովորական ուժով և լավ վորակի ընտանիքներից մեկը. 3) արևի մոմհալ, մոմի կտորները և քերված մոմերը հավաքելու և հալելու համար. 4) գիտողությունների տետր կամ որադիր՝ ողի փոփոխությունները և կշռափեթակի վերաբերյալ անդեկությունները գրանցելու համար:

21. Մեղվանոցի յուրաքանչյուր ընտանիք պետք է առնվազն 14 չեշով փապհովված լինի:

22. Չեշերը ցեցից պաշտպանելու համար պետք է նախապես նրանք դասավորել կորպուսներ՝ մեջ, վրան ցանել նաֆթալին, կորպուսները դարսել մեկը մեկի վրա սյունաձև և անցքերը փակել՝ մկներից պաշտպանելու համար:

23. Լեռնային և նախալեռնային շրջաններում մեղվի բոլոր ընտանիքներն՝ աշնանը (ոռապտեմբեր և հոկտեմբեր ամիսներին) պետք է ունենան առնվազը 7 շրջանակ (1400 գ)՝ մեղու և 16 կգ մեղրի պաշար, իսկ դաշտային շրջաններում՝ առնվազն 6 շրջանակ (1200 գ) մեղու և 14 կգ մեղրի պաշար: Ձմեռոցից դուրս դնելուց հետո, գարնան գլխավոր ստուգման ժամանակ, լեռնային և նախալեռնային շրջաններում մեղվի բոլոր ընտանիքները պետք է ունենան

առնվազն 6 շրջանակ (1200 գ) մեղու և 12 կգ մեղրի պաշար, իսկ դաշտային շրջաններում՝ առնվազն 5 շրջանակ (1000 գ) մեղու և 10 կգ պաշար:

24. Վորպես անձեռնմխելի ֆոնդ, մեղվանոցը ձմեռոց գնացող յուրաքանչյուր ընտանիքի համար պետք է պահի մեկ շրջանակ լիքը կնքված մեղր:

25. Յուրաքանչյուր մեղվանոց ձմեռոց պետք է դնի ձմեռող ընտանիքների քանակի առնվազը 10 տոկոսի չափով պահեստի մայրեր՝ նույն լեռնաներով:

26. Մեղուները ձմեռոց դնելուց առաջ փեթակներից պետք է վերցնել այն բոլոր շրջանակները, վորոնց վրա մեղու չկա և ապա կատարել տաքացումների լրացում:

27. Դրսում ձմեռող մեղվի ընտանիքները պետք է սարքավորված լինեն անհամեմատ ավելի լավ տաքացումներով:

28. Այն շենքերը, վորտեղ ձմեռելու ցն մեղուները, նախապես պետք է հարմարեցնել ձմեռոցի նորմալ պահանջներին, շենքը պետք է լինի քացարձակապես մուլ, չոր, ազմուկից հեռու, տանիքը սկաղած, ողափոխությունը հարմարեցված, ներքը մաքրված և հալեվան շենքերի ծխից պաշտպանված:

29. Մեղուները ձմեռոցում պետք է գար-
սել այնպես, վոր հնարավոր լինի շարքերի
արանքով անցնել: Փեթակները մկներից ազա-
նույն:

ՄԵՂՎԱՐՈՒԹՅԱՆ ԶՈՈՎԵՏ ԿԱՆՈՆՆԵՐ

Մեղվաբուծության նորմալ զարգացմանը
խոշոր արգելք են հանդիսանում հիվանդությունն-
երը, վորոնք փչացնում են մեղուների վորդերը,
թուլացնում և շատ դեպքերում հանգցնում մեծ
թվով ընտանիքներ, հսկայական վնաս պատճառե-
լով սոցիալիստական մեղվաբուծությանը:

Մեղվի հիվանդությունների դեմ կազմա-
կերպված ձեվով պայքար տանելու և հնարավոր
չափով վարակումը կանխելու նպատակով առ-
հրաժեշտ է բոլոր մեղվանոցներում՝ գործադրել
առօրե բերված գոռ-վետ կանոնները:

1. Մեղվանոցներում և նրա շրջապատում
չթողնել և վոչ մի իր (փեթակ, շրջանակներ,
դանակ, քերիչ, մոմի մնացորդ և այլն):

2. Ախտահանել մեղվանոցային բոլոր շեն-
քերը (ձմեռոցներ, պահեստ, աշխատանոց, բուգ-
կաներ և այլն) թե՛ գարնանը և թե՛ աշնանը:

3. Առանց մաքուր խալաթի մեղվանոց
չմտնել, իսկ մեղվանոցային աշխատանքից դուրս
նույն խալաթով ման չգալ:

4. Մեղվանոցում անպայման ունենալ լվա-
ցարան, ոճառ, սրբիչ և ախտահանիչ նյութեր
(սուլեմայի լուծույթ 0,001 և ֆորմալինի լու-
ծույթ 30 տոկոսանոց):

Ծանոթություն. — Սուլեմայի և ֆորմալինի
լուծույթների գործածության ժամանակ զգուշ
լինել և այդպիսիները պահել հատուկ պահա-
րաններում:

5. Վորջան հնարավոր է մեղվանոցում չու-
նենալ և չպահել մեղուների թույլ ընտանիք-
ներ:

6. Յեթե կան թույլ ընտանիքներ, մասնա-
վորապես գարնանը և աշնանը, յերբ բերքը բա-
ցակայում է, փոքրացնել նրանց արկանոցը և
միշտ հսկել, վոր հարձակումների չենթարկվեն:

7. Մի փեթակից մի այլ փեթակ մեղուներ,
շրջանակներով վորդ, մեղր կամ շրջանակ չտեղա-
փոխել, առանց նախապես/վատահ լինելու, վոր
այն ընտանիքը, վորտեղից վերցվում է, կամ վոր-
տեղ կատարվելու յե փոխադրումը, գերծ է հի-
վանդությունից:

8. Մեղուներին չկերակրել այլ տեղերից
բերած մեղրով:

9. Մեղուներին ծոր մեղրով կերակրելիս
մեղրին խառնել հավասար քանակությամբ ջուր,

յեռացնել առնվազն 40—50 ըուպե և նոր միայն տալ մեղուներին:

10. Տարբեր տեղերից ձեռք բերված գործածված հին փեթակներ, շրջանակներ, կործիքներ և այլն, չորգտագործել առանց նախապես մաքրելու և ախտահանելու:

11. Չգնել և չվաճառել մեղուների հիվանդ ընտանիքներ կամ նրանցից, հենց նոր ստացված բնական կամ արհեստական ձագեր:

12. Հիվանդ ընտանիքներից բնական ձագ ստացվելու դեպքում այդպիսին տեղավորել միմիայն մոմաթերթով շրջանակներ ունեցող մաքուր փեթակի մեջ: Հիվանդ ընտանիքներից արհեստական ձագ չվերցնել:

13. Մոմաթերթ գնելիս նախապատվություն տալ միայն պետական արհեստանոցներում պատրաստած մոմաթերթին և խուսափել պրիմիտիվ ձևով պատրաստածներից:

14. Թույլ, անպտղաբեր և յերկու տարեկանից բարձր հասակ ունեցող մայրեր չպահել բացառությամբ տոմային ռեկորդիստ մայրերի:

15. Տարբեր մեղվանոցներից ստացված մայրերը փոխադրել մաքուր մայրավանդակի մեջ և հետո տալ ընտանիքներին, նրանց հետ յեկած մայրավանդակներն ախտահանել և մեղու-

ներն ու պաշարը, յեթե կան, անպայման վոչընչացնել:

16. Խուսափել կնքված բուսաբլիշները կտրտելուց և գետին թափելուց:

17. Միշտ հետևել մեղուների ընտանիքների ընդհանուր դրությանը, վաղորոք հայտաբերել հիվանդ ընտանիքները և վորոշել հիվանդության տեսակը:


18. Հիվանդ ընտանիքներ հայտաբերելիս առանձին ուշադրության առարկա դարձնել նրանց, վորպեսզի հարձակումների չենթարկվեն:

19. Վորքան հնարավոր ե շուտ բուժման յենթարկել բոլոր հիվանդ ընտանիքները, առանց հիվանդության տեսակը նկատի ունենալու:

20. Բուժումը կատարել միայն թափ տալու միջոցով: Թափ տված ընտանիքներն առնվազը 48 ժամ դատարկ շրջանակների (և վոչ թե չեչերով կամ մոմաթերթով շրջանակների) վրա պահելուց հետո միայն փոխադրել նոր կամ ախտահանված փեթակի մեջ՝ մոմաթերթով մաքուր շրջանակների վրա, կիրառելով հիվանդությունների դեմ պայքարելու հրահանգում նախատեսված բոլոր կետերը:

21. Նախքան բուժման աշխատանքներին անցնելը կատարել նախազատրաստական անհրաժեշտ աշխատանքներ՝ բուժման գործողությունը

642
37



վորքան հնարավոր ե հեշտացնելու և գործողութ-
յան ժամանակը կրճատելու նպատակով:

22. Թափ տալու գործողությունն առհասա-
րակ կատարել յերեկոյան, յերբ մեղունների մաս-
սայական թռիչքը դադարում ե:

23. Հիվանդ ընտանիքների հետ աշխատելիս
խիստ զգուշ լինել, վորպեսզի վարակված մեղրով
կամ հիվանդ վորդերով լիքը շրջանակները վոշ
մի բոլոր բաց չմնան և այլ մեղունների հարձակման
չենթարկվեն:

24. Հիվանդ ընտանիքների հետ աշխատելուց
հետո ձեռքերը և գործիքներն անպայման լվանալ
և ախտահանել, հագնել մաքուր խալաթ՝ նախքան
այլ առողջ ընտանիքի ձեռք տալը:

25. Հիվանդ ընտանիքները թափ տալուց
հետո նրանցից վերջրած վորդով շրջանակներն
անմիջապես պետք ե տեղավորել թույլ և հիվանդ
ընտանիքներում, իսկ մեղրով շրջանակները և
փեթակն իր սարքավորումով անմիջապես մեղվա-
նոցից հեռացնել համապատասխան փակ տեղ,
փեթակները և նրա մասերն անմիջապես ախտա-
հանել, մեղրը քամել և չեչերը հալել:

26. Փեթակները և նրա մասերը լրիվ ախտա-
հանելու համար անպայման նախապես հիմնա-
կանորեն քերել յեղած մոմն ու ակնամուրը, հա-

տալն անջատել արկղից և հետո ախտահանել
(խանձել) պայալնի լամպով:

Կողքի տոպրակներն ու վրայի շորերը, յեթե
նրանք նոր են, պետք ե ախտահանել առնվազն
մեկ ժամ յեռացնելով, իսկ հներն այրել:

ՄԱՅՐԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Շնորհիվ մայրաբուժության մեղվանոցի
արդյունաբերությունը կրկնապատկվում ե:
Ա. Պերլե-Մեզոնով

1. ՄԱՅՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մեղվաբուժական տնտեսություններն ար-
դյունավետ դարձնելու համար պետք ե լավ խնամ-
քի հետ միասին բարձրացնել նաև մեղունների
վորակակաճ հատկությունները: Յուրաքանչյուր
մեղվապահ լավ պետք ե գիտակցի, վոր մեղվի
ընտանիքի բարեկեցությունն ու բերքատվությու-
նը գլխավորապես մոր վորակից ե կախված, դրա
համար պետք ե զբաղվել արհեստական մայրա-
բուժությամբ:

Արհեստական մայրահանման գործով զբաղվե-
լիս անհրաժեշտ ե աջնալիսի ընտանիքներ ընտրել,
վորոնք տարիներ շարունակ միևնույն պայման-
ներում լինելով՝ աչքի յեն ընկել իրենց աշխա-

տասիրությամբ, բարձր մեղրատուությամբ, մոմարտադրողականությամբ, ձագատության թույլ հակումով, մաքրասիրությամբ, կլիմայական աննպաստ սլայմանների, հիվանդությունների, հարձակումների դիմացկունությունը:

Հավորակ մայրերն ստանալու համար անհրաժեշտ է ունենալ նաև լավորակ բոներ, հետևապես արհեստական բուսբուծությունը համարվում է նույնպիսի անհրաժեշտություն, ինչպես և մայրաբուծությունը:

2. ՄԱՅՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԲՈՒՍԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՄԱՎԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Արհեստական մայրաբուծության աշխատանքներն այնպիսի ժամանակ պետք է սկսել, վոր նոր ծնված մայրերի անարգել բեղմնավորումը հնարավոր լինի: Մեր դաշտային շրջաններում այդ ժամանակը համարվում է ապրիլի 2-րդ կեսը, իսկ լեռնային շրջաններում՝ մայիսի 2-րդ կեսը: Մայրահանման ու բուսահանման աշխատանքներն այնպես պետք է կազմակերպել, վոր առհասարակ ձագեր վերցնելու ժամանակ բեղմնավորված մայրեր լինեն: Ուստի չպետք է մոռանալ, վոր ձվից մայրերը դուրս են գալիս 16 որում, սեռական հասունության են հասնում 3—4 որում, բեղմնավորվում են դուրս գալուց հետո

6—10 որում և ձվում են բեղմնավորվելուց 3 որ հետո: Բոները ձվից դուրս են գալիս 23—24 որում, սեռական հասունության են հասնում 14 որում: Այս հանգամանքը նկատի ունենալով՝ բուսբուծության աշխատանքները մայրաբուծությունից 16 որ առաջ պետք է սկսել:

Մայրահանման ու բուսահանման համար ընտրված ընտանիքները, բացի տոհմական հատկություններից, պետք է ապահովված լինեն պաշարով, կողերի և վրայի տաքացումներով, ջահել (այս տարվա) մեղուներով:

Մայրաբուծության համար պետք է մեղվանոցից ընտրել յերեք ընտանիք, վորոնցից մեկը բուսահանման, 2-րդը մայրահանման համար վորդ ու ձու վերցնելու, իսկ 3-րդը՝ մայրապտուկներ խնամելու համար:

Ամբողջ գործողության ընթացքում ընտրված ընտանիքներին անհրաժեշտ է որական 100—150 գրամ զրգովի կեր տալ:

Բուսահանման աշխատանքներն առանձին բարդությունների հետ կապված չեն, ուստի և անհրաժեշտ է միայն չեչեր ունենալ և ձվելու համար դնել ընտրված ընտանիքի բնի կենտրոնում:

Արհեստական մայրահանման յեղանակներ

շատ կան, բայց մեր պայմաններում առայժմ ավելի լավ է կիրառել Պեխաշեկի և Շիշկինի յեղանակները, մորոնք տեխնիկապես ավելի մատչելի յեն մեր շարքային մեղվապահների համար։ Մի ընտանիքի վրա սեզոնի ընթացքում յերկու պատվաստից ավելի չպետք է կատարվի։

3. ՊԵԽԱՉԵԿԻ ՄԱՅՐԱՀԱՆՄԱՆ ՅԵՂԱՆԱԿԸ

Նախապես պետք է ընտրել յերկու ընտանիք. ա) նրանցից մեկին՝ տոհմականին ձվելու համար բնի կենտրոնում պետք է տալ մի սպիտակ, թարմ չեչ, վորի մեջ յերբեք վորդեր չեն խնամվել. բ) յերկրորդ ընտանիքը, վորը մայրապտուկների խնամողն է հանդիսանալու, պատվաստելու որն առավոտյան պետք է վորբացնել, համապատասխան տաքացումներ տալ, կերապաշարով ապահովել և առանց բացառության փեթակից հեռացնել բոլոր չկնքված վորդն ու ձուռն։ Այն դեպքում մեղվապահից մեծ ուշադրություն է պահանջվում, վորովհետև թողած մի կամ մի քանի վորդ ու ձուռն ամբողջ աշխատանքը կարող են փչացնել. գ) ձվարկության համար տոհմական ընտանիքին տրված չեչը 4-րդ որը պետք է վերցնել և տանել 8—25—30° ջերմություն ունեցող մի սենյակ, պառկեցնել սեղանի վրա՝ դեպի վեր դարձնելով այն յերեսը, վոր լավ է

ձված, ապա տաքացրած սուր դանակի ձայրով հորիզոնական ուղղությամբ վոչնչացնել 3-ական շարք բջիջը, իսկ մի շարքը թողնել անփաստ։ Յերբ ամբողջ շրջանակի յերեսն այս ձևով պատրաստված լինի, պետք է սկսել վոչնչացնել ուղղահայաց՝ անփաստ թողնված շարքերից 3-ական բջիջ՝ թողնելով մեկը։

Շարքերի վոչնչացման ժամանակ շատ զգուշ և ուշադիր պետք է լինել, վոր թողնվելիք բջիջները չվնասվեն։ Շարքերի արանքի վոչնչացված բջիջներն այնպես պետք է մաքրել, վոր վոչ մի հատ վորդ ու ձուռն չմնա։ Դրա համար պետք է գործադրել ատամի բարակ խոզանակ։

Պետք է նաև խիստ ուշադիր լինել, վոր չեչի հիմնապատը չկտրվի կամ չվնասվի։ Այս աշխատանքը պետք է կատարել հնարավորին չափ արագ։ Խնամող ընտանիքը պետք է ունենա առնվազն 5—6 շրջանակ պաթող (1000 գրամ) մեղու։

Նախքան պատվաստված շրջանակը խնամող ընտանիքին տալը, այդ ընտանիքի շրջանակների վրայից մի դատարկ, 35 միլիմետր բարձրություն ունեցող շրջանակ պետք է դնել, իսկ վերջինիս վրա՝ պատրաստված չեչը՝ բջիջները ներքև՝ դեպի ընտանիքի բուռն դարձրած։ Շրջանակի վրայից պետք է դնել ֆաներայի բարակ

տախտակ, շորով ծածկել և դնել սաքացումները.
իսկ այդ բոլորը պետք է տեղավորել մի վերնա-
հարկի մեջ և ծածկել: Յերկրորդ որը պետք է
ստուգել՝ թե մեղուներն արդյոք խնամելու աշ-
խատանքն սկսել են, թե՞ վաղ. յեթե աշխատանքը
չեն սկսել, կամ շատ քիչ մայրապտուկներ են
խնամում, պետք է ընտրել ուրիշ ընտանիք և
նրան տալ նոր պատվաստում:

4. ԵՐԵՎԱՆԻ ՄԱՅՐԱՆԱՄԱՆ ՑԵՆԱՆԱԿԸ

Ընտրած տոհմական ընտանիքի բնի կենտ-
րոնում պետք է դնել մի այնպիսի չեչ, վորի
մեջ զարգացել է մի քանի սերունդ վորդ: Չեչը
տոհմական ընտանիքին տալուց չորս որ հետո
պետք է նայել, յեթե տված չեչի մեջ մայրը
ձվել է, և այդ ձվերն արդեն դարձել են 12 36
ժամվա հասակ ունեցող վորդեր, պետք է վերց-
նել այդ չեչը և տանել մի սենյակ, վորտեղ
չերմաստիճանը պետք է լինի 25—30° (ըստ
Յելսիուսի): Չեչը պետք է դնել սեղանի կամ
առանձին տախտակի վրա և տաքացրած սուր
գանակով կտրել չեչը մի կամ մի քանի բջջաշա-
քերի յերկարությամբ, իսկ շրջանակի վրա ֆա-
ցած չեչը՝ վորդերով պետք է տանել և տեղավո-
րել իր տեղում:

Չեչի յերկարությամբ կտրած բջջաշաքերը

նույն դանակով պետք է կտրատել, թողնելով
մեկական բջիջ: Բջիջների այն կողմը, վորն ընտը-
ված է մայրուցների համար, պետք է վրայից սուր
դանակով բջիջների խորությունը կեսից ավելին
կտրել, առանց վնասելու վորդերին, իսկ հակա-
ռակ կողմի բջիջները թողնել նույնությամբ:
Այդ կատարելուց հետո անմիջապես ձեռնարկել
բջիջները՝ մինչ այդ պատրաստած շրջանակների
կողերի վրա կպցված կտր խցանների վրա կպցը-
նելու աշխատանքին: Բջջի հակառակ կողմը պետք
է թաթախել հալած մոմի մեջ և կպցնել խցանի
վրա: Պետք է զգուշ լինել, վոր բջիջն ամբողջապես
չթաթախվի մոմի մեջ, տաք մոմը չհասնի մաշ-
րացուների բջջին և վոչնչացնի վորդը: Պատվաստ-
ման աշխատանքներն ավարտելուց հետո պատ-
վաստված շրջանակը պետք է տանել և տեղա-
վորել նախապես վորբացրած խնամող ընտա-
նիքի բնի կենտրոնում: Հաջորդ-կամ յերկրորդ որը
պետք է ստուգել, յեթե խնամելու աշխատանք-
ները չեն սկսել, պետք է կրկնել, այս անգամ
խնամելու համար ընտրելով ուրիշ ընտանիք:

Նախքան պատվաստման աշխատանքներին
ձեռնարկելը պետք է վերցնել մի գատարկ շրջա-
նակ և տափակ ձողերով (պլանկաններով) բաժա-
նել յերեք մասի: Ձողերը շրջանակի ծայրերից
չպետք է մեխել, այլ տակից կպցնել մի փոքրիկ

պատվանդան այն հաշվով, վոր նրանց ծայրերը նստեն պատվանդանների վրա: Վորպեսզի ձողերը չշարժվեն, ծայրերը պետք է թաթախել հալած մոմի մեջ: Յուրաքանչյուր ձողի ներքևի յերեսից հալած մոմով պետք է կպցնել 20—22 հատ կլոր խցան, վորի բարձրությունը և տրամագիծը պետք է լինի 14 մմ: Պատրաստված մեկ շրջանակի ձողերի վրա կարելի յե կպցնել մինչև 60—66 խցան: Պատվաստած շրջանակը պետք է տալ բնի կենտրոններում: Շատ մայրապտուկ ստանալու նկատառումով խնամող ընտանիքին կարելի յե տալ յերկու շրջանակ պատվաստում. այս դեպքում այդ շրջանակները պետք է տեղավորել բնի կենտրոնում այնպես, վոր յերկու կամ յերեք շրջանակով միմյանցից բաժանված լինեն: Ժամանակից ավելի շուտ մայրաբուծությունը զբաղվելու համար ավելի ձեռնտու յե կիրառել Շիշկինի յեղանակը, քան թե Պելաշեկինը:

5. ՆՈՒԿԼԵՈՒՍՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ՄԱՅՐԱՊՏՈՒԿԼԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Մայրերը դուրս գալուց 23 օր առաջ մայրապտուկների քանակի համաձայն նուկլեոսներ պետք է կազմակերպել հետեվյալ ձևով: Վերջինի մի սովորական 12 շրջանականոց փեթակ և շրջանակների յերկարությունը բաժանել 3—4 հա-

վասար մասի: Բաժանմունքներն իրար հետ վոչ մի հաղորդակցություն չպետք է ունենան, վորտեղից մեղունները կարողանան անցնել: Յուրաքանչյուր բաժանմունքում պետք է դնել ուժեղ ընտանիքից վերցված մի լավ շրջանակ վորդ ու ձու, մեղուններով, և մի շրջանակ մեղր ու ծաղկափոշի:

Նուկլեոսների արկանոցները պետք է առանձին և տարբեր ուղղություն բացված լինեն և տարբեր գույնի ներկած:

Այնուհետև Պելաշեկի յեղանակով պատրաստված մայրապտուկներով չեչը պետք է վերցնել զգուշությամբ, առանց վնասելու կտրատել բոլոր մայրապտուկները և բաժանել նուկլեոսներին: Շիշկինի յեղանակով ստացված մայրապտուկները ձողերից (սլանկաներից) պոկել խրցանով և ամրացնել նուկլեոսի շրջանակի վրա խցանը դեպի վեր: Ավելացած մայրապտուկները չոչնչացնել, այլ առանձին առանձին դնել մաքրավանդակների մեջ, իսկ վերջիններս ամրացնել մի դատարկ շրջանակի վրա և դնել մի ուրիշ ընտանիքի մեջ և դուրս գալուց հետո ոգտագործել:

Մայրը բեղմնավորվելուց հետո նուկլեոսներում պետք է թողնել մինչև 7 օր, վորպեսզի հնարավոր լինի ստուգել նրա վորակը, վորից հետո կարելի յե ոգտագործել, իսկ նրա փոխարեն տալ նոր մայրապտուկ:

Անմայր ընտանիքին կամ նոր վերցված ձագին բեղմնավորված կամ չբեղմնավորված մայր ապու համար նրան պետք է դնել մայրավանդակի մեջ և տեղավորել շրջանակների միջև, մեղրի մոտ, վորտեղ մեղունները հավաքված են: Յերկու որ հետո պետք է մորը բաց թողնել մայրավանդակից:

Այն մայրերը, վորոնք դժվար են ընդունվում մեղունների կողմից, պետք է մայրավանդակի ստորին կողմից խցանի տեղ կպցնել մոմաթերթի շերտ, թողնելով, վոր մեղուններն իրենք դուրս բերեն մորը:

ՌԵԿՈՐԴԻՍՏ ՄԱՅՐԵՐԻ ՀԱՅՏԱԲԵՐՈՒՄԸ

Անցյալում մեղրաբուծության ասպարեզում սելեկցիոն ցեղերի ազնվացման աշխատանքների և զոոտեխնիկական կոնկրետ միջոցառումների բացակայությունը մեծ չափով խոչնդոտ է հանդիսացել մեղվաբուծության վորակական զարգացմանը:

Արտադրողների (մայրերի և բոռերի) մասսայական պարզ ընտրությունն ու վերընտրությունը մեղունների վորակական բարելավման գործում հանդիսանում է առաջին քայլը:

Իսկ այդ կարելի չէ կատարել՝ կազմակերպելով և խորացնելով սելեկցիոն աշխատանքները:

Մեղունների բիոլոգիական մի շարք առանձնահատկությունների շնորհիվ, ինչպես սելեկցիոն, նույնպես և վերարտադրությունը կատարվում է մայրերի գծով, վորով մեղունների վորակի բարելավման առաջին ու հիմնական աշխատանքը հանդիսանում է ունկորդիստ մայրերի հայտաբերումը: Այդ առթիվ անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր.

1. Ռեկորդիստ մայրեր հայտաբերել հնարավոր է այն մեղվանոցներում, վորտեղ կանոնավոր կերպով կազմակերպված է արտադրական կոնտրոլ հաշվառը, առանց վորի, ինչպես էլ վոր լինի, սելեկցիոն աշխատանքն ապարդյուն կլինի:

2. Արտադրական կոնտրոլ գրանցումներում պետք է արտացոլվեն հայտաբերված ունկորդիստ մոր տնտեսապես ոգտակար հատկությունների հիմնական ցուցանիշները, նրա ձվարկության քանակը, ընտանիքի բանվոր մեղունների տված մեղրի ու մոմի քանակը, միևնույն ժամանակ պիտի նկատի ունենալ վարակիչ հիվանդությունների և աննպաստ պայմանների հանդեպ ունեցած դիմացկունությունը, համեմատաբար նվազ ձագատվությունը և այլն:

3. Ռեկորդիստ մայրերի հայտաբերումը

պետք է անցկացնել ազրո-զոո-կանոնների և զոո-վետ միխիմուլի պահանջները լրիվ կիրառող մեղվանոցներում, վորոնք ապահովված են կերի պաշարով, լավ մեղրաբերքով, մեղուների կանոնավոր կերակրման, պահպանման ու խնամքի պայմաններով:

4. Ռեկորդիստ մայրեր հայտաբերելու և հայտաբերվածների համեմատական և ճիշտ գնահատականը տալու համար անհրաժեշտ է աշխատանքներ կատարել միանման պայմաններում, այսինքն՝ այնպիսի մեղվանոցում, վորտեղ մեղրաբերքի, կերակրման, պահպանման և խնամքի պայմանները միևնույնն են. բացի այդ, համեմատվող մայրերի հասակները պետք է նույնը լինեն:

5. Ռեկորդիստների նախնական հայտաբերումից հետո, արտադրական կոնտրոլ հաշվառքի տվյալների հիման վրա, պիտի կատարել ռեկորդիստների տնտեսական ոգտակար հատկությունների ճշտորոշված հաշվառքը, այն ե.

ա) կշռել սեզոնի ընթացքում հավաքած ամբողջ մեղրը (թե ձմեռվա համար թողածը, և թե վորպես ապրանքային մեղր վերցրածը).

բ) հաշվի առնել մոմի արտադրանքը (սեզոնի ընթացքում կառուցված չեչերի քանակը և քերված ու հավաքված մոմը).

գ) մոր ձվարկության քանակը (12 որբ մի անգամ չափելով կնքած վորդի քանակը, ըստ Պոլտեվի յեղանակի):

6. Պետք է հատուկ արձանագրություն կազմել ռեկորդիստի կամ մի խումբ ռեկորդիստների հայտաբերման մասին: Այդ արձանագրության մեջ մանրամասն պետք է գրել ռեկորդիստին բնորոշող բոլոր տվյալները, նկարագրել մեղրաբերքի, կերակրման, պահպանման ու խնամքի պայմանները և կցել նույն մեղվանոցի արտադրական կոնտրոլ գրանցումները, կոնտրոլ փեթակի տվյալները, մյուս ընտանիքների արդյունավետության մասին յեղած նյութերը և այլն:

7. Հայտաբերված ռեկորդիստներին պետք է ոգտագործել նրանցից մեծ քանակությամբ մայրեր ստանալու համար:

ԱՐՇԵՍՏԱԿԱՆ ՁԱԳԵՐ ՎԵՐՑՆԵԼԸ

Ռացիոնալ մեղվաբուծության զարգացման հիմքում պետք է լինեն յերկու կարևոր մոմենտներ. 1) անխնա պայքար բնական ձագատության դեմ և 2) մեղվանոցն աճեցնել արհեստական ձագեր վերցնելու միջոցով:

Մեր պայմաններում նպատակահարմար է արհեստական ձագեր վերցնել ցածրագիթ շրջան-

ներում մայիս ամսվա առաջի կեսից, իսկ լեռնային շրջաններում՝ մայիսի յերկրորդ կեսից:

Ձագերը վերցնելուց առաջ՝ ձեռքի տակ պետք է ունենալ բեղմնավորված կամ չբեղմնավորված մայրեր և կամ հասունացած մայրապտուկներ:

Արհեստական ձագեր կարելի չէ վերցնել յերեք յեղանակով, նայած տեղին և բերքի պայմաններին:

1. Մեկ ընտանիքից փոքր ձագ՝ վերցնելը (մասնատման կամ ատվոտկայի յեղանակ):

2. Կիսման յեղանակ և 3. մի քանի ընտանիքներից մի ձագ վերցնել (հավաքական յեղանակ):

1) Ատվոտկաների յեղանակով ձագ են վերցնում փորքան կարելի չէ շուտ: Այս դեպքում հիմնական ընտանիքից պետք է վերցնել յերկու շրջանակ մեղովով, փոքից մեկը լինի փորդ և ձու, իսկ մյուսը մեղը և մեկ ծաղկափողի: Վերցված մասին պետք է տալ մայրապտուկ, իսկ մոր դուրս գալուց և բեղմնավորվելուց հետո՝ նրան պետք է հիմնական ընտանիքից ուժ տալ այն հաշվով, փոր նա կարողանա ժամանակին դարգանալ և պատշաճ ուժով դիմավորել գլխավոր մեղրաբերքը:

Այս յեղանակով ձագն սկզբնական շրջանում

կարելի չէ վերցնել հիմնական ընտանիքը նախապես քաշելով իր փեթակի մի կողմը և փեթակը միջնապատով բաժանելով յերկու մասի: Հիմնական ընտանիքի և նոր ընտանիքի արևանոցները պետք է լինեն առանձին: Հետագայում, յերբ այդ ընտանիքները աճեն՝ զարգանան և փեթակում այլևս տեղ չլինի, նրանցից մեկը պետք է փոխադրել մի այլ փեթակի մեջ:

Ձագեր վերցնելու ժամանակ, յեթե պետք յեղած քանակությամբ դատարկ փեթակներ չկան, կարելի չէ մեկ դատարկ փեթակում տեղավորել յերկու ձագ, փեթակը նախապես ֆաներկայի միջնապատով բաժանելով յերկու հավասար մասի, իսկ յերբ կաճեն՝ կզարգանան, նրանցից մեկը փոխադրել նոր փեթակի մեջ:

2) Կիսման յեղանակով ձագը պետք է վերցնել գլխավոր բերքից առնվազն 30—50 որ առաջ այն ընտանիքներից, փորոնք ունեն առնվազն 10—12 շրջանակ պատող մեղու և 7—8 շրջանակ փորդ ու ձու:

Այս յեղանակով ձագ վերցնելու համար կիսվող ընտանիքի փեթակը պետք է մի փոքր քաշել մի կողմի վրա և նրա կողքին դնել նույն գույնն ունեցող մի դատարկ փեթակ, ապա բացել կիսվող ընտանիքը և փորդով, մեղրով ու ծաղկափողով շրջանակների հավասարապես կեսը

իրենց վրա յեղած մեղուններով տեղափոխել նոր փեթակի մեջ, հետո նոր ընտանիքի փեթակը մի փոքր մոտեցնել մայր ընտանիքին. այդպիսով յերկու ընտանիքներն ել իրենց մեջ կուսենան տարբեր հասակի մեղուններ: Կիսման աշխատանքը վերջացնելուց հետո, այն մասը, վոր մայր չունի, նրան անպայման պետք է տալ բեղմնավորված մայր:

3) Հավաքական յեղանակով ձագ վերցնել մեր արտադրության մեջ ներկայումս խորհուրդ չի տրվում:

Վերցնելիք արհեստական ձագի ուժը, շրջանակների թիվը—վորդ ու ձուռն և մեղվի քանակը կախված են ինչպես ձագ վերցնելու ժամանակից, նույնպես այն հանգամանքից, թե վերցրած ձագերին բեղմնավորված, չբեղմնավորված մայր, թե հասունացած մայրապտուկ է տրվելու:

Գլխավոր մեղրաբերքին ավելի մոտիկ ժամանակներում վերցված ձագերն անհամեմատ ավելի ուժեղ պետք է լինեն, քան թե շատ ավելի առաջ վերցվածները: Ուշ վերցված ձագերին անպայման պետք է տալ բեղմնավորված մայր:

Առաջադրելով մեղվապահներին հրահանգում հիշված ձագ վերցնելու յեղանակները, մեղվապահներին իրենց է թողնվում այդ յեղանակների

ընտրությունը, յեխելով իրենց պայմաններից և մեղվանոցի ընդհանուր վիճակից:

Արհեստական ձագ պետք չէ վերցնել. 1) այնպիսի ընտանիքներից, վորոնք հիվանդության վորևե կասկածելի նշան ունեն, 2) այնպիսի փեթակների մեջ, վորոնք գործածված են, բայց չեն ախտահանված, 3) գլխավոր բերքի ընթացքում:

Վաղ վերցված արհեստական ձագերին պետք է անհամեմատ ավելի լավ խնամել և ապահովել բնի լավ տաքացումներով, վորպեսզի վորդն ու ձուռն չմրսեն:

Պետք է նկատի ունենալ, վոր բեղմնավորվելիս մայրերից առնվազն 10 տոկոսը զանազան պատճառներով կորչում է, կամ չի բեղմնավորվում. հետևապես այդ խնդրում պետք է չափազանց զգուշ լինել, վոր նոր կազմված ընտանիքներն առանց մոր չմնան և բոռաձու չդառնան:

Տեխ. խմբագիրը և սրբագրիչ՝ Խ. Այվազյան

Գլավիտի լիազոր № 1188

Հրատ. 433, պատվեր 471, տիրած 1500

Հանձնվել է արտադրության 1937 թ. մայիսի 16-ին

Մտորագրված է տպագրելու 1937 թ. հունիսի 14-ին

Գյուղընտրի տպարան, Յերևան, Նալբանդյան № 11

ՀՀ Ազգային գրադարան



NL0286916

314

22.972

1987 30 419



Пчеловодные правила